ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/25

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.01.2022թ. թիվ 26/26-1/1224-2022 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի 17.01.2022թ. թիվ 18.1/1098-2022 գրության հիման վրա, 24.01.2022թ. թիվ 26/26-1/1224-2022 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/25 ընթացակարգի շրջանակներում 27.01.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ վարչապետի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.01.2022թ. թիվ 18.1/1098-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի ապրիլի 09-ին կնքված՝ ՀՀ ԿԵ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-3, 2021 թվականի հունիսի 09-ին կնքված՝ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-21/12-7 պայմանագրի և 2021 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ ՀՀ ԿԵ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրեր), «Ազուռ» ՍՊԸ-ն չի մատակարարել նշված պայմանագրերով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը, վարչապետի աշխատակազմը միակողմանի լուծել է պայմանագրերը:

Կից ներկայացնում ենք հիմնավորող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/25 ընթացակարգի շրջանակներում 27.01.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 27.04.2021թ. կնքվել է թիվ «ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 1), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված գրասենյակային նյութերը և գրենական պիտույքները, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Պայմանագիր 1-ին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համապատասխանաբար ըստ չափաբաժինների 2021թ. 3-րդ և 4-րդ եռամսյակները: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

2. ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 09.04.2021թ. կնքվել է թիվ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 2), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլեր, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Պայմանագիր 2-ին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել

համապատասխանաբար ըստ քանակների 2-րդ և 3-րդ եռամսյակները: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 09.06.2021թ. կնքվել է թիվ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-21/12-7» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 3), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքներն ու սանիհիգիենիկ նյութերը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Պայմանագիր 3-ին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համապատասխանաբար ըստ չափաբաժինների 2021թ. 3-րդ և 4-րդ եռամսյակները: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ՀՀ վարչապետի աշխատակազմը, «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի ապրիլի 09-ին կնքված՝ ՀՀ ԿԵ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-3, 2021 թվականի հունիսի 09-ին կնքված՝ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-21/12-7 պայմանագրի և 2021 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ ՀՀ ԿԵ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրեր), «Ազուռ» ՍՊԸ-ն չի մատակարարել նշված պայմանագրերով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ վարչապետի աշխատակազմը միակողմանի լուծել է պայմանագրերը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 14.01.2022թ. հրապարակվել է պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.01.2022թ. թիվ 26/26-1/1224-2022 գրությունը, ՀՀ վարչապետի աշխատակազմի 17.01.2022թ. թիվ 18.1/1098-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 27.04.2021թ. կնքվել է թիվ «ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված գրասենյակային նյութերը և գրենական պիտույքները, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Պայմանագիր 1-ին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համապատասխանաբար ըստ չափաբաժինների 2021թ. 3-րդ և 4-րդ եռամսյակները: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 09.04.2021թ. կնքվել է թիվ «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով սահմանված

կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլեր, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Պայմանագիր 2-ին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համապատասխանաբար ըստ քանակների 2-րդ և 3-րդ եռամսյակները: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 09.06.2021թ. կնքվել է թիվ «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-21/12-7» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքներն ու սանիհիգիենիկ նյութերը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

- Պայմանագիր 3-ին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել համապատասխանաբար ըստ չափաբաժինների 2021թ. 3-րդ և 4-րդ եռամսյակները: Միևնույն ժամանակ սահմանվել է, որ մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՀՀ վարչապետի աշխատակազմը, «Ազուռ» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի ապրիլի 09-ին կնքված՝ ՀՀ ԿԵ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-3, 2021 թվականի հունիսի 09-ին կնքված՝ ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների մատակարարման ՈՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-21/12-7 պայմանագրի և 2021 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ ՀՀ ԿԵ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ապրանքների

մատակարարման ՈՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրեր), «Ազուռ» ՍՊԸ-ն չի մատակարարել նշված պայմանագրերով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ վարչապետի աշխատակազմը միակողմանի լուծել է պայմանագրերը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 14.01.2022թ. հրապարակվել է պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***10 օրից ավելի***:

Պայմանագիր 3-ի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***15 օրից ավելի***:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Ազուռ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ վարչապետի աշխատակազմի միջև 27.04.2021թ. կնքված «ՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-2», 09.04.2021թ. կնքված «ՎԱԲՏ-ԳՀԱՊՁԲ-21/3-3» և

09.06.2021թ. կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-21/12-7» պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել պայմանագրերով սահմանված էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրերի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.01.2022թ. թիվ 26/26-1/1224-2022 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ազուռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**